դիմել Եւրոպայի դատաստանին, եթէ բոլգարական խառնակութիւնները չը վերջանան։

Բէլգրադից „Polit. Corresp“ լրագրին հաղորդում են, թէ Բոլգարիայի ներկայացուցիչը գանգատվեց տեղական կառավարութեանը սերբական լրագիրների յարձակմունքների պատճառով բոլգարական գործերի մասին։ Սերբիայի կառավարութիւնը խոստացաւ դատաստանական հալածանք սկսել յիշեալ լրագիրների դէմ, եթէ այդ բանը պաշտօնապէս կը պահանջի բոլգարական կառավարութիւնը։

Թիւրքաց կառավարութիւնը յայտնել է պետութիւնների ներկայացուցիչներին, որ իշխան Ալէքսանդը խախտում է Բերլինի դաշնագիրը, աշխատելով անսահման իշխանութիւն ձեռք բերել։

Անգլիական պարլամենտը արդէն մի քանի անգամ բարձրացրել է բոլգարական հարցը, թէպէտ նա այդ հարցին այնպիսի ուշադրութեամբ չէ վերաբերվել, որին նա կարօտ է։ Նորերումս համայնքների ժողովի անդամներից մէկի հարցին Գլադստօն պատասխանեց, որ բրիտանական կառավարութիւնը միշտ կը պաշտպանի ազատութեան, արդարութեան և օրինականութեան մեծ սկզբունքները։ Գլադստօն իր կարծիքը բոլգարական գործերի մասին յայտնեց մի մանաւոր նամակով, որին բոլգարական կառավարութիւնը պատասխանեց երկրի մէջ գործադրած խիստ միջոցներով։ Ազատամիտ կուսակցութեան „Daily News“ լրագիրը ասում է, որ Անգլիան իրաւունք ունի ձայն բարձրացնել և պաշտպանել Բերլինի դաշնագրով որոշված օրինաւոր կարգը Բոլգարիայի մէջ Եւրոպական պետութիւնների անմիջական մասնակցութեամբ։ Պարլամենտի անդամներից մէկը նշանաւոր մեծամասնութեան կողմից բոլգարական գործերի մասին նոյն կարծիքը յայտնեց, ինչ որ Գլադստօն էր յայտնել։ Այդպիսով բոլգարական իշխանի նպատակներին դիմադրում է անգլիական հասարակական կարծիքը, որի հետ համաձայն է Եւրոպան, բացի Գերմանիայից և Աւստրօ-Ունգարիայից, իսկ այդ ընդդիմադրութիւնը մեծ նշանակութիւն ունի Բոլգարիայի համար։

Բոլգարիայից ստացված վերջին տեղեկութիւններից երևում է, որ բոլգարական գործերի դրութիւնը շատ վատ է։ Կալանաւորութիւնները, գինուորական դատարանը, մամուլի հալածելը, վարչական խիստ միջոցները, դրանք բոլորն էլ, կարող են շատ վատ հետևանքներ ունենալ։ Թէպէտ աւստրիական և գերմանական մի քանի լրագիրներ հաղորդում են, որ Բոլգարիայի մէջ գործադրած միջոցները և իշխան Ալէքսանդրի բռնած ընթացքը ոգևորութեամբ են ընդունվում ժողովրդի կողմից, բայց այդ լուրերի աղբիւրները շատ կասկածելի են և նրանց հաղորդող լրագիրներն էլ իրանց նպատակներն ունեն։

ԱՆԳԼԻԱ

Կալուածական միութեան փակելու հարցը դարձեալ բարձրացած է, չը նայելով որ դեռ նորերումս այդ բանը անկարելի և սահմանադրութեան հակառակ էր համարվում։ Բայց այժմ օրինակ են բերում, որ մի ժամանակ կաթոլիկների միութիւնը ապօրինի համարվեցաւ կառավարութենից և փակվեցաւ։ Ֆօրսաթը դեռ ևս Իրլանդիայից չէ վերադարձել և այդ պատճառով կառավարութիւնը միջոց չունի վերջնականապէս վճռել այդ հարցը։ Կօրկի կոմսութեան մէջ ուղարկված զօրքերը այնտեղ երկար ժամանակ կը մնան երկաթուղիները, հեռագիրները և պօլիցիական տները պաշտպանելու համար։

Իրլանդական ապստամբութեան գլխաւոր մասնակիցների մասին արդէն կայացաւ դատաստանը։ Նրանցից հինգ մարդ դատապարտված են չորս ամսվայ կալանաւորութեանը, 15 երեք ամսվայ, իսկ մնացածները դրամական տուգանքների։ Այն տեղերի մէջ, ուր անկարգութիւններ են սպասվում, տարածված են կառավարչական ազդարարութիւններ, որոնք հրաւիրում են ժողովրդին հանգիստ մնալ և կարգը չը խանգարել, սպառնալով հակառակ դէպքում մեղաւորներին սաստիկ պատժել։

Լօնդօնի „Ժողովրդական միութիւնը“ մի ժողով կայացրեց, որին առաջարկվեցաւ ընդհանուր գործողութեան նախագիծը։ Նախագիծը 'ի միջի այլոց պահանջում է, որ հասակաւոր ընտրողները հաւասար իրաւունքներ ունենան, ընտրողական շրջանները միմեանց համեմատ լինեն և որ օրէնսդրական շրջանը միայն երեք տարի ևւէ։ Ժողովի նախագահը յայտնեց, որ անգլիական հասարակութիւնը, հաւանութիւն տալով Իրլանդիայի մէջ կատարված բռնութիւններին, կարող է դրանից ինքը վնասվել։ Իրլանդական անկախութեան մասին առաջարկութիւնը պաշտպանում էր իրլանդացի պատգամաւոր Մակ-Կօրտի։ Նախագիծը միաձայն ընդունվեցաւ ժողովից։

ԳԵՐՄԱՆԻԱ

„Berliner Tageblatt“ գերմանական լրագիրը մի համեմատական յօդուած է տպել իշխան Բիսմարկի և Գամբետտայի մասին, որոնք միատեսակ հեղինակութիւն ունեն Եւրոպայի մէջ, չը նայելով նրանց պաշտօնական դրութեան զանազանութեանը։ Այդ համեմատութիւնը այն եզրակացութեան է հանում, որ առաւելութիւնը Ֆրանսիական գործիչի կողմն է։

Գերմանական կանցլերը ստիպում է հլը-պատակվել նրա կարծիքներին, չապացուցանելով նրանց իրաւացիութիւնը, այլ ստիպմամբ, մինչդեռ Գամբետտա ազդում է իր ապացոյցների ուժով, առանց ստիպելու, ազատ խօսքի օգնութեամբ։ Իշխան Բիսմարկ միշտ հիմնվում է իր հեղինակութեան և իշխանութեան վրա, աւելորդ համարելով համոզել երկիրը և նրա ներկայացուցիչներին իր ձեռնարկած վերանորոգութիւնների օգտակարութեան մէջ։ Նա անց է կացնում իր անձնական հայեացքները մինչև անգամ մասնագիտական հարցերի մէջ, ուշադրութիւն չը դարձնելով մասնագէտների կարծիքների և ժողովրդական ճիշդ ցանկութիւնների վրա։ Փոխանակ իր տնտեսական միջոցների անհրաժեշտութիւնը ապացուցանելու իշխան Բիսմարկ ուշադրութիւն չէ դարձնում ազատամիտների և հասարակութեան լուսաւորված դասի ընդդիմադրութեան վրա և, միացած ասիճանաւորների, պահպանողականների և կղերականների զանազան տարրերի հետ, մաքառում է ազատամիտների դէմ։

Թէ հասարակութիւնը, թէ գերմանական պարլամենտը և թէ Գերմանիայի ամբողջ ազգաբնակութիւնը կասկածանքով է վերաբերվում իշխան Բիսմարկի տնտեսական տէորիաներին։ Նրա մաքսային քաղաքականութիւնը, որ պէտք է մեծացնէր պետական եկամուտները, երկրի մէջ թանգութիւն գցեցին։ Իշխան Բիսմարկի սոցիալական վերանորոգութիւնները վերջ 'ի վերջոյ այն հետևանքի են հասցնում, որ դժուարացնում են բանուորների մեծամասնութեան դրութիւնը, ապահովելով փոքրամասնութեանը։

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական առաջին մինիստր ժիւլ Ֆերրի մտադիր է մի քաղաքական ճառ արտասանել Էպինալի մէջ, որտեղ նա ուղևորվում է այդ քաղաքի մէջ կազմվող գիւղատնտեսական ասնին ներկայ գտնվելու համար։ Ֆերրի մտադիր է այդ ճառով բացատրել այն թերի կարծիքները, որոնք տարածվել են կառավարութեան չափաւոր ընթացքի պատճառով հասարակական կարծիքը զբաղող նշանաւոր հարցերի վերաբերութեամբ։

Պատերազմական մինիստր գեներալ Ֆարր անբաւական է քուէարկութենից զինուորական ծառայութեան ժամանակամիջոցի մասին, բայց նա մտադիր չէ հրաժարական տալ։

Պատգամաւորների ընտրութիւնները Եւրոպի սեպտեմբերին կը կատարվեն։ Նահանգական զրեթէ բոլոր լրագիրները ծաղրում են „République Française“ լրագրի հաղորդած լուրը, իբր թէ ընտրողական օրէնքի մերժելը սենատի կողմից նահանգներում մեծ տպաւորութիւն գործեց։ Այդ լրագիրները պնդում են, որ նահանգները սենատի վճռին անտարբերութեամբ վերաբերվեցան և նրանց վրա վատ տպաւորութիւն գործեց պատգամաւորների ժողովը ժամանակից առաջ արձակելու պահանջը։ Այսպէս խօսում են ոչ թէ յեսադիմական լրագիրները, այլ նրանք, որոնք մինչև այժմ Գամբետտայի պաշտպաններն էին։ Հաւատացնում են, որ Գամբետտայի բարեկամները ամենկերպ աշխատում են դժուարութիւններ պատճառելու համար։ Նրանք պնդում են, որ Գամբետտա ժողովի պատգամաւորների ժողովի նախագահութիւնը և բոլոր միջոցներով աշխատի մինիստրութիւնը իր ձեռքը դցելու համար։ Գամբետտա սառնութեամբ է ընդունում այդ խորհուրդները։

Ընդհանուր ուշադրութիւնը դարձրած է „Հավասի ընկերութեան“ նկատողութեան վրա, որ սպառնում է Թիւրքիային Տրիպոլիս զօրքեր ուղարկելու համար այն նպատակով, որ ցոյց տրվի տեղական հասարակութեանը, թէ Տրիպոլիսը Թիւրքիայի նահանգ է։ Կարծում են, որ այդ նկատողութիւնը վատ տպաւորութիւն կը գործէ։

Գամբետտա դարձեալ մի նշանաւոր անաջողութեան հանդիպեց։ Նա յոյս ունէր, որ այժմեան պատգամաւորների ժողովը ժամանակից առաջ կարձակվի և ինքը կը կարողանայ պատրաստել նոր ընտրութիւններ Գրեվիի և սենատի դէմ։ Նրա օգնական Բարդու պատրաստականութիւն յայտնեց առաջարկել պատգամաւորների ժողովին, որ նա հրաւիրի նախագահ Գրեվիին ժամանակից առաջ արձակել պատգամաւորների ժողովը։ Յունիսի 13-ին հաւաքվեցան հանրապետական կուսակցութեան բոլոր բաժինները այդ հարցը քննելու համար։ Վիճաբանութիւնները շատ տաք էին և նրանց հետևանքը անսպասելի։ Հանրապետականները 250 ձայների մեծամասնութեամբ 70 դէմ վճռեցին չը պահանջել այժմեան ժողովի արձակելը։ Հանրապետական միութիւնը սենատի մէջ յայտնեց, որ նա սահմանադրութեան վերաքննութիւնը օգտակար է համարում, միայն թէ պատգամաւորների ընտրութեան համար ներկայ բանաձևերը պակաս անյարմար է։ Ինչպէս երևում է Գամբետտա վճռել է հանդուրժութեամբ տանել անձնական այդ անաջողութիւնները և այժմ „République Française“ լրագիրը չափաւորութիւն է քարոզում։ Այժմեան երկպառակութիւնները սենատի և պատգամաւորների ժողովի մէջ Բանկ վերաբերում է Գամբետտայի և Գրեվիի մէջ եղած սառնութեանը։ Պատգամաւորների ժողովը շուտով կը սկսի բիւդժետի քննութիւնը։

Մինիստրների խորհուրդը վճռեց, որ այլևս չէ կարելի պատգամաւորների ժողովի արձակելու հարցը քննել, քանի որ պարլամենտական մեծամասնութիւնը կայացրել է վերոյիշեալ վճիռը։ Կառավարութիւնը մտադիր է առաջարկել, որ գաղթականութիւնների մէջ ընդհանուր ընտրողական օրէնքները գործադրվեն, փոխանակ արտաքոյ կարգի օրէնքների։ Պարլամենտական աշխատանքների վերջը Գրեվի կամենում է դիմել Ֆրանսիական օրէնսդրական ժողովներին մի շրջաբերականով և այնուհետև այցելել Ֆրանսիական նահանգները։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրները հաղորդում են, որ Կ. Պոլսի ռուսաց դեսպան Նելիդով առաջարկել է Բ. Դրանը մի ծրագիր Փոքր-Ասիայում վերանորոգութիւններ մտցնելու մասին։

—Վանից մեզ մասնաւոր նամակով հաղորդում են որ Թիւրքիան շատ կասկածաւոր աչքով է նայում այդտեղի մարմնամարզութեան և Հայաստանի աշխարհագրութեան դասաւորութեան վրա։ Կարծես դրանց մէջ տեսնում է երկու զօրեղ թշնամիներ, որոնք պատրաստվում են իր դէմ մարտնչելու։

—Կարինից մեզ հաղորդում են որ այդտեղ անհամբեր սպասում են նոր բարձրագոյն դպրոցի բացման և թէ նորաւարտ ուսումնական խումբը պէտք է շուտով արտասահմանից գայ այդ քաղաքը իր գործը սկսելու համար։

—Վանից մեզ գրում են որ մինչև այժմ Վանի և Էրզրումի (Կարինի) մէջ տէրութեան փոստ չը կար։ Այժմ հաստատվել է այդ երկու քաղաքների մէջ փոստային հաստատութիւնը և այժմ նամակները Կ. Պոլսից 13 օրվայ միջոցում Վան են հասնում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկայում ապրում է և առողջ դրութեան մէջ է գտնվում մի կին՝ միս Մարգարիտա Բէլէ, որը յունվարի 8-ին տօնում էր իր ծննդեան օրը 110-դ անգամ։ Անգլիական թղթակիցը գրում է, որ ինքն համոզվեցաւ այդ կնոջ տարիների ճշդութեան մէջ նրա ծխի եկեղեցական գրքերից, որի մէջ գրված են նրա բոլոր ազգականները։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 96 ր. 50 կ., երկրորդ 94 ր. 50 կ., երրորդ 94 ր. 50 կ., չորրորդ 94 ր. 62 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 50 կ., երկրորդ 219 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 93 ր. 12 կ., երկրորդ 92 ր. 87 կ., երրորդ 92 ր. 87 կ., ոսկի 8 ր. 15 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,45 պէնս, Ամստերդամի վրա 123 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 209 մարկ, Փարիզի վրա արժէ 256 ֆրանկ 87 սանտիմ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ